

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սեդա ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Լուսինե ԲԱԳՈՒՄՅԱՆ
Երևանի պետական համալսարան

ՔԵՆԵԹ ԳՐԵՀԵՄԻ «ՔԱՄԻՆ ՈՒՌԻՆԵՐԻ ՄԵՋ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԻՆՎԵՐՍԻԱՆ) ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Շրջադասության հետևանքով իր տեղը փոխած բառն ավելի է շեշտվում՝ նպաստելով խոսքի հուզականությանը: Ոճական այս հնարանքը՝ որոշիչ-որոշյալի, ենթակա-ստորոգյալի, լրացումների յուրահատուկ շրջումները մեծ վարպետությամբ է կիրառել Ք. Գրեհեմն իր «Քամին ուռիների մեջ» հայտնի վեպում, որոնք ստեղծագործությանը տալիս են ոճական տարբեր երանգավորումներ: Հայերեն տարբերակում, սակայն, փոքր-ինչ դժվար է պահպանել այս ոճական հնարանքի բնագրային հուզականությունն ու ուժգնությունը՝ հաշվի առնելով հայերենի ոչ կայուն շարադասությունը:

Քանալի քառեր. շարադասություն, շրջադասություն, ոճագիտություն, ետադրություն, նախադրություն, ենթակա, ստորոգյալ, ստորոգելի, հանգույց, որոշիչ, որոշյալ, հատկացուցիչ, հատկացյալ, խնդիր, պարագա

Շարադասությունը առանցքային դեր է կատարում յուրաքանչյուր լեզվի քերականության մեջ, և անկարելի է ոճաբանական վերլուծություն կատարելիս չանդրադառնալ շարադասության խնդրին: Շատ լեզվաբաններ են ուշադրություն դարձրել շարադասությանն ու դրան առնչվող խնդիրներին: Ինչպես նշում է Լ. Եզեկյանը, յուրաքանչյուր լեզու իր զարգացման տվյալ փուլում ունի նախադասության անդամների դասավորության սահմանված որոշակի սկզբունքներ և որոշակի ընդունված կարգ, որը, սակայն, այս կամ այն պատճառով, ոճական որոշակի նպատակադրմամբ և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքում կարող է խախտվել կամ փոփոխվել: Նշված փոփոխությունները կամ նախադասության շարադասության այս եղանակը հիմնականում կատարվում են խոսքի պատկերավորման, արտահայտչական նպատակով և կոչվում են շրջադասություն (ինվերսիա) /Եզեկյան, 2003: 366-367/:

Շրջադասության հետևանքով իր տեղը փոխած բառն ավելի է շեշտվում, ընդգծվում՝ դրանով իսկ ավելի նպաստելով խոսքի հուզականությանը:

Հայերենում և անգլերենում նախադասությունների շարադասությունը տարբեր է, այն է՝ հայերենում նախադասության շարադասությունը կայուն է,

նախադասության անդամների տեղերը կարելի է փոփոխել առանց որոշակի իմաստային փոփոխության, մինչդեռ անգլերենում շարադասությունն ավելի կայուն է, այն է՝ ենթակա, ստորոգյալ, ապա լրացումներ: Հետևաբար հայերենում ենթակայի և խնդրի տեղերը փոխելիս իմաստային աղճատման չենք հանգի, այնուամենայնիվ, անգլերենում նմանատիպ փոփոխություններն անկարելի են, եթե դա չի կատարվում շրջադասության (ինվերսիայի) շրջանակներում:

Շրջուն շարադասությամբ մեծ մասամբ կարող են հանդես գալ ենթական և ստորոգյալը, որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչն ու հատկացյալը:

Ետադաս որոշիչը ամենից հաճախ հանդիպող տարբերակն է, որի դեպքում որոշիչ-որոշյալներն ավելի ուժեղ տրամաբանական և հուզական շեշտ են ստանում:

At last, over the rim of the waiting earth the moon lifted with slow majesty till it swung clear of the horizon and rode off, free of mornings; and once more they began to see surfaces-meadows wide-spread, and quiet gardens, and the river itself from bank to bank, all softly disclosed, all washed clean of mystery and terror, all radiant again as by day, but with a difference that was tremendous. (p. 173-174)

Վերջապես սպասողական երկրի վրա լուսինն իր դանդաղ վեհաշուք լույսով գծագրվեց, մինչև որ առանձնացավ-առաջացավ: Նրանք մեկ անգամ ևս տեսան լայնատարած մակերեսներ, զմրուխտ մարգագետիններ, խաղաղ պարտեզներ ու այգիներ, իսկ գետն ինքնին ավետափ, մեղմ անդորրով բացվեց, ի հայտ եկավ խորհրդավոր գիշերվա սարսափից մաքրված-լվացված, ցոլացող-պսպղացող օրվա լույսի ներքո, միայն այն տարբերությամբ, որ հիմա հսկայածավալ էր: (էջ 140)

Բերված օրինակում ընդգծված ետադաս որոշիչը ոչ միայն նպաստում է խոսքի հուզականությանը, այլև ավելի է ընդգծում բովանդակությունը, տվյալ դեպքում մարգագետինների (meadows) լայնածավալությունը (wide-spread): Ի տարբերություն այս որոշիչ-որոշյալի՝ հաջորդիվ ունենք ևս մեկ օրինակ (quiet gardens), որտեղ, ունենալով սահմանված շարադասություն, նվազում է խոսքի հուզականությունը: Նույն օրինակի հայերեն թարգմանության տարբերակում կարելի է նկատել ոչ շրջուն շարադասություն, որոշիչն ու որոշյալը դրված են ավանդական քերականությամբ նախատեսված հերթականությամբ՝ լայնատարած մակերեսներ, զմրուխտ մարգագետիններ՝ ընդ որում կատարելով հավելում և ավելացնելով զմրուխտ բառը: Այլ կերպ՝ հայերեն օրինակը չի ներկայացնում բնօրինակի հուզականությունը: Բնագրի իմաստային հուզականությունը պահպանելու առումով ավելի նպատակահարմար կլիներ թարգմանել այս կերպ՝

Նրանք մեկ անգամ ևս տեսան հարթավայրեր-մարգագետիններ լայնատարած, խաղաղ պարտեզներ ու այգիներ...

Զննարկենք որոշիչ-որոշյալի շրջուն շարադասության մեկ այլ օրինակ:

Pausing there a moment and looking back, they saw the whole mass of the Wild Wood, dense, menacing, compact, grimly set in vast white surroundings; simultaneously they turned and made swiftly for home, for firelight and the familiar things it played on, for the voice, sounding cheerily outside their window, of the river that they knew and trusted in all its moods, that never made them afraid with any amazement. (p. 123)

Մի պահ կանգ առան, հետ նայեցին ու տեսան ողջ Վայրի Վայրն ամբողջությամբ մեջ անծայրածիր, խիտ, թավուտ, սպառնալից, տարածված ճերմակ ծածկոցով, և անմիջապես արագ շարժվեցին տուն, դեպի տուն, քանի որ ծանոթ, հարազատ առարկաների վրա վետվետում էր բուխարու լույսը, իսկ գետը քչքչում էր պատուհանից դուրս ուրախ-գվարթ, գոհ ու երջանիկ, որ իրեն սիրում են ու վստահում ամեն եղանակին, գետը, իրենց գետը, որ երբեք իրենց չէր հիասթափեցնի: (էջ 88)

Վերը բերված օրինակում հեղինակն օգտագործում է հետադաս որոշիչներ (dense, menacing, compact, grimly set in vast white surroundings), որոնք այս դեպքում թարգմանիչը հաջողությամբ պահպանել է (անծայրածիր, խիտ, թավուտ, սպառնալից, տարածված ճերմակ ծածկոցով)՝ դնելով որոշիչը որոշյալից հետո՝ այդպիսով է՛լ ավելի ընդգծելով Վայրի Վայրին բնորոշ հատկանիշները՝ ընդարձակությունը, ճերմակությունը, խտությունը: Այնուամենայնիվ, այստեղ առկա է որոշակի շեղում բնագրից, քանի որ թարգմանիչն իր հայեցողությամբ որոշակիորեն փոփոխություն է կատարել որոշիչների բնագրային հերթականության մեջ: Բնագրում որոշիչները դասավորված են հետևյալ հերթականությամբ՝ *խիտ, սպառնալից, թավուտ, տարածված անծայրածիր, ճերմակ ծածկոցով*, որով հեղինակը որոշակի տրամաբանական ուժգնություն է հաղորդում նկարագրությանը՝ սկսելով խտությունից և ավարտելով ընդարձակությամբ (ընդ որում, անգլերենում օգտագործված է «vast-ընդարձակ» բառը, որը հայերենում դարձել է անծայրածիր. իմաստի ընդլայնում է տեղի ունեցել), մինչդեռ հայերեն տարբերակում այդ տրամաբանական և հուզական հնչերանգը ավելի թույլ է արտահայտված:

Շարադասության փոփոխության հաճախ հանդիպող մյուս տեսակը ենթակա-ստորոգյալի ոչ կանոնավոր դասավորությունն է, այս դեպքում՝ ստորոգելիի նախադրությունը. այն է՝ երբ ստորոգելին դրվում է ենթակայից առաջ:

By the time he came down again luncheon was on the table, and very glad Toad was to see it, for he had been through some trying experiences and had taken much hard exercise since the excellent breakfast provided for him by the gipsy. (p.267)

Երբ նորից ցած եկավ, նախաճաշը սեղանի վրա պատրաստ իրեն էր սպասում: Ղողոշը շատ ուրախագավ՝ տեսնելով այն, քանզի առավոտից ի վեր, երբ զնչուն իրեն համով-հոտով, շքեղ նախաճաշ էր հրամցրել, նրա

գլխով շատ փորձանք էր եկել-անցել, շատ փորձությունների էր դիմացել:
(էջ 228)

Անգլերեն տարբերակում կանոնավոր շարադասությունը պետք է լիներ «Toad was very glad to see...», սակայն այստեղ «glad» ստորոգելին իր «very» լրացման հետ (չափ ու քանակի պարագա) դրված է ենթակայից առաջ, իսկ հանգույցը «was»-ը ենթակայից հետո: Բառերի այս ոչ սովորական, շրջուն շարադասության շնորհիվ հաճախ ստեղծվում է տրամաբանական շեշտի ոճական երանգավորում, որին հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել: Այստեղ հեղինակը միտում ունի ներկայացնելու Դոդոշի հոգեվիճակը: Քանի որ նա շատ զգայուն կերպար է, հեղինակը փորձում է այս հնարանքի միջոցով ընդգծել նրա ուրախությունը, և այդ նպատակով նա օգտագործել է շրջուն շարադասություն՝ ենթակայից առաջ դնելով նրան բնութագրող բառը: Հայերեն տարբերակում անգլերենի բաղադրյալ անվանական ստորոգյալը թարգմանվել է որպես պարզ ստորոգյալ (անցյալ կատարյալ ժամանակաձևով)՝ «Դոդոշը շատ ուրախացավ՝ տեսնելով այն...» կորցնելով ոճական երանգավորումը: Հայերեն տարբերակում առավել նախընտրելի կլիներ այս հատվածը թարգմանել «Շատ էր ուրախ Դոդոշը՝ տեսնելով այն...», քանի որ այլ տարբերակներում (Շատ ուրախ էր Դոդոշը՝ տեսնելով այն..., Ուրախ էր շատ Դոդոշը՝ տեսնելով այն...) հայերեն շարադասությունը գուրկ է ոճական հնչերանգից: Ծիշտ է, այս տարբերակում Դոդոշին բնորոշ հոգեվիճակի դրսևորման միայն չափն է դրված ենթակայից առաջ, սակայն հայերեն տարբերակում նրա ուրախությունն առավել ակնհայտ է դառնում:

Ենթակա-ստորոգելիի շրջուն շարադասության հետևյալ օրինակները նույնպես արժանի են քննության:

Such a rich chapter it had been, when one came to look back on it all! (p. 85)

Ի՜նչ հետաքրքիր օրեր, ի՜նչ հարուստ բազմազան-զարմանազան պատկերներ և հիշողություններ, երբ հետ ես նայում: (էջ 53)

Այս օրինակը հատկապես հետաքրքրական է թարգմանության տեսանկյունից: Նախ փորձենք հասկանալ բնագիր տարբերակը: Այստեղ մենք կրկին ունենք ենթակա-ստորոգելի անկանոն շարադասություն, որտեղ ստորոգելին իր լրացումներով դրված է ենթակայից առաջ: Դասական քերականության շարադասությամբ այն կլիներ «It had been such a rich chapter»: Հայերեն տարբերակում թարգմանիչը պարզեցման և բացատրության մեթոդով է փորձել ներկայացնել թարգմանությունը: Իհարկե, մենք ունենք բավականին գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ ոճական տեսանկյունից ոչ համարժեք թարգմանություն: Դրան առավել համարժեք հայերեն թարգմանություն կլիներ՝ «Ինչպիսի հարուստ էջեր էին. հիշողությունների գիրկն ես ընկնում, երբ հետ ես նայում»:

Այստեղ հարկ է քննել մեկ այլ վերլուծական տարբերակ: Երբեմն թարգմանական տարբերակում թարգմանիչն ստիպված է լինում կամ ցանկանում է

փոխարինել մի ոճական հնարը մեկ այլ ոճական հնարով՝ միաժամանակ պահպանելով բնագրի ամբողջական իմաստը: Այսպիսով, այս դեպքում ձևի փոփոխությունը չի ազդում բովանդակության վրա: Այստեղ, օրինակ, թարգմանիչը հետաքրքիր լուծում է գտել այդ տեսանկյունից՝ բացականչական նախադասության միջոցով արտահայտելով այն, ինչ հեղինակն արտահայտել է շրջուն շարադասության միջոցով: Այսպես, քանի որ հայերենի շարադասությունն այդ հնարավորությունները չի տալիս, այսինքն՝ հայերենում շրջունությունը թույլ է արտահայտված, կարելի է կիրառել լրացուցիչ միջոցներ՝ ահա դրանցից մեկն էլ օգտագործված է բերված օրինակում:

Then the whistling began.

Very faint and shrill it was; and far behind him, when first he heard it; but somehow it made him hurry forward. (p. 89)

Հետո սուլոց լսվեց: Շատ թույլ, բայց զիլ սուլոց. Հենց իր հետևում, հենց սկզբից, բայց և այնպես շտապ-շտապ շարունակեց ճամփան: (էջ 56)

Այս օրինակում ևս ունենք ստորոգելիի նախադրություն: Անգլերեն տարբերակում «faint and shrill» համասեռ ստորոգելիները դրված են ենթակայից առաջ իրենց «very» լրացման հետ (չափ ու քանակի պարագա), մինչդեռ ոճական երանգավորում չունենալու տարբերակում այն պետք է լիներ՝ «It was very faint and shrill»: Հայերեն տարբերակում թարգմանիչը կատարել է նախադասության մեջ պաշտոնների տեղաշարժ, այն է՝ անգլերեն տարբերակում ածականով արտահայտված ստորոգելիական վերադիրները հայերեն տարբերակում դարձել են նույն ածականով արտահայտված որոշիչներ՝ կրկին կորցնելով համապատասխան ոճական հնչերանգը: Այս նախադասության ավելի համարժեք թարգմանությունը կլիներ՝ «Հետո սուլոց լսվեց: Թույլ էր շատ, բայց զիլ...»: Եվս մեկ դիտարկում այս օրինակի հետ կապված: Անգլերենում մենք ունենք բարդ համադասական-ստորադասական նախադասություն՝ բազմաշաղկապությամբ կապված, մինչդեռ նույն հայերեն նախադասությունը թարգմանիչը բաժանել է երեք նախադասության՝ անշաղկապությամբ կապված: Նախադասության դիտարկվող հատվածն անգլերենում երկանդամ նախադասություն է, իսկ հայերենում՝ միանդամ:

‘O, terrible bad, sir, terrible deep the snow is,’ said the hedgehog, ‘and he said as how he was going to be particular busy this morning, and on no account was he to be disturbed.’ (p. 113)

-Սարսափելի է, սարսափելի, պարո՛ն: Չյունը հասնում է մինչև ծնկները, բողբոջեց ողնին: – Դուք այսօր այստեղ մնացեք, դուրս գալ չեք կարող: (էջ 78)

Այս նախադասության մեջ վերստին ունենք ստորոգելիների ոչ կանոնավոր դասավորվածություն, «terrible bad և terrible deep» ստորոգելիները դրված են «snow» ենթակայից առաջ՝ այդպիսով խիստ ուժգնացնելով ձյան սարսափելի վատ և սարսափելի առատ լինելու իմաստը, սակայն հայերեն

տարբերակում նախադասության կառուցվածքը փոխված է, և այստեղ սարսափելի բառը չի վերաբերում ձյանը, այլ իրավիճակին, որն ստեղծվել է դրա հետևանքով: Իսկ ձյան առատ լինելու իմաստն արտահայտված է հետևյալ կերպ՝ «Ձյունը հասնում է մինչև ծկները»: Ինչ խոսք, թարմանիչը թեև տարբեր ոճական հնչերանգով, բայց յուրահատուկ լուծում է գտել իրավիճակին, սակայն այստեղ հարկ է կատարել մի դիտարկում. բնագրի «terrible deep the snow is» նշանակում է սարսափելի առատ ձյուն է, որն ունի շատ անհատական ընկալում: Այսպես, այստեղ հեղինակն ընթերցողին է թողել ձյան առատության չափը պատկերացնելու աստիճանը (մեկի ընկալմամբ՝ հնարավոր է առատ ձյունը ծնկներն հասնող ձյունն է, մեկ ուրիշի համար՝ իրեն ծածկող ձյունը և այլն), սակայն թարգմանության մեջ այն սահմանափակ է (Ձյունը հասնում է մինչև ծկները): Թարգմանական ընթերցողի պատկերացումն այս դեպքում սահմանափակված է ձյան՝ ծնկներից լինելով:

Over went the boat, and he found himself struggling in the river. (p. 58)

Նավակը շուռ եկավ, ու Խյուրդը հայտնվեց գետում՝ կռիվ տալով ջրի հետ: (էջ 26)

Ենթակա-ստորոգյալի շրջադասության մեկ այլ օրինակ է այս նախադասությունը, որտեղ մենք ունենք պարզ ստորոգյալ, և անգլերեն տարբերակում այն դրված է ենթակայից առաջ, իսկ նավակի շուռ գալու իմաստը էլ ավելի է ընգծվում «go over» դարձվածքային բայի «over» ետադրությունը դնելով բայից առաջ: Հայերեն տարբերակում ունենք կանոնավոր նախադասություն, որտեղ շեշտված չէ նախադասության որևէ անդամ: Ոճական քիչ թե շատ (քիչ թե շատ, քանի որ հայերեն նախադասության ինչքան էլ փորձենք ոճական երանգավորում տալու նպատակով շարադասության փոփոխություններ կատարել, այնուամենայնիվ, այն սովորական է հնչում՝ հաշվի առնելով հայերենի ոչ կայուն շարադասությունը) ընդգծված նախադասություն ունենալու համար ավելի հնչեղ կլինեի հետևյալ տարբերակը՝ «Շուռ եկավ նավակը», քանի որ շուռ գալ-ը, նախադասության սկիզբ բերելով, մենք կարող էինք ապահովել նախադասության այդ անդամի շեշտվածությունը:

Տրամաբանական շեշտի ճկուն կիրառության և ուժգնության հասնելու մեկ այլ տարբերակ է տարբեր լրացումների միտումնավոր նախդրությունը, այս դեպքում՝ պարագաների նախդրությունը, այն է՝ պարագան նախադասության սկզբում դնելը՝ հեռացնելով նախադասության այն անդամից, որին այն վերաբերում է:

Slowly, but with no doubt or hesitation whatever, and in something of a solemn expectancy, the two animals passed through the broken tumultuous water and moored their boat at the flowery margin of the island. (p.177)

Դանդաղ, առանց շտապելու կամ հապաղելու, հանդիսավոր ակնկալիքների դեմ հանդիման Խյուրդն ու Ջրամուկը անցան աղմկարար, փրփրա-

դեզ ջրերի միջով ու խարխիս գցեցին կղզյակի ծաղկավետ ափին: (էջ 144)

Ինչպես հայտնի է, պարագան ածականի և մակբայի նման նկարագրում է նախադասության որևէ անդամին կամ անդամներին և նախորդում կամ հաջորդում է տվյալ անդամին կամ անդամներին: Սակայն մեր օրինակում պարագան և բառը, որին այն վերաբերում է, բավականին հեռու են իրարից: Այսպիսով, տվյալ նախադասության մեջ ստորոգյալի լրացումը՝ ձևի պարագան, ստորոգյալից հեռու է գտնվում՝ փոխելով պարագայի կանոնավոր գործածությունը և ստեղծելով համապատասխան ոճական հնչերանգ:

Very thoughtless of him, I call it. (p.99)

Այ քեզ անփութություն, կասեի: (էջ 66)

Վերոնշյալ օրինակում մենք ունենք խնդրի նախդրություն: Սովորաբար և՛ անգլերեն, և՛ հայերեն տարբերակներում խնդիրները դրվում են այն բառից հետո, որին լրացնում են, սակայն այս պարագայում երկու տարբերակներում էլ խնդիրը դրվել է նախադասության սկզբում՝ դրան հաղորդելով ոճական շեշտված արտահայտչականություն:

Ոճական այս հնարանը՝ որոշիչ-որոշյալի, ենթակա-ստորոգյալի, լրացումների յուրահատուկ շրջումները մեծ վարպետությամբ է կիրառել Ք. Գրեհեմն իր «Քամին ուռիների մեջ» հայտնի վեպում, որոնք ստեղծագործությանը ոճական տարբեր երանգավորումներ են տալիս: Ինչ վերաբերում է հայերեն տարբերակին, փոքր-ինչ դժվար է պահպանել այս ոճական հնարի իրական՝ բնագրային հուզականությունն ու ուժգնությունը՝ հաշվի առնելով հայերեն լեզվի ոչ կայուն շարահատությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրեհեմ Ք. Քամին ուռիների մեջ, Երևան, 2012:
2. Եզեկյան Լ. Ոճագիտություն, Երևան, 2003:
3. Պողոսյան Պ.Մ. Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, խոսքի տեսություն, գիրք երկրորդ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1991:
4. Grahame K. The Wind in the Willows. Moscow: Progress Publishers, 1981.
5. Рубайло А. Художественные средства языка. М., 1961.

Ս. ГАБРИЕЛЯН, Լ. БАГУМЯН – *Стилистическая инверсия в произведении Кеннета Грэма «Ветер в ивах» и проблема ее перевода на армянский язык.* – Слово, изменившее свое место вследствие стилистической инверсии, больше акцентируется, способствуя эмоциональности речи. Кеннет Грэм с большим мастерством использовал этот стилистический прием, (определение – определяемое, подлежащее – сказуемое, своеобразные дополнительные обороты)

в своем знаменитом романе «Ветер в ивах», который и придает произведению разнообразные стилистические оттенки. Однако в армянском переводе, довольно трудно сохранить текстуальный вариант эмоциональности и силу этого стилистического метода, учитывая не фиксированный порядок слов армянского языка.

Ключевые слова: порядок слов, стилистическая инверсия, стилистика, предлог, подлежащее, сказуемое, предикатив, завязка, ссылка, определение, определяемое, дополнение, обстоятельство

S. GABRIELIAN, L. BAGUMYAN – *Stylistic Inversion in Kenneth Grahame’s “The Wind in the Willows” and the Problem of Its Translation.* – The word having changed its place due to stylistic inversion is emphasized more so intensifying the speech emotionality. Kenneth Grahame made use of this stylistic device (with inversions of attribute-adjunct, subject-predicate, different modifiers) in “The Wind in the Willows” creating stylistic colouring. However, it’s a bit difficult to preserve the original emotionality and vigour of this device in the translation taking into consideration the Armenian non-fixed word order.

Key words: word order, stylistic inversion, stylistics, postposition, preposition, subject, predicate, predicative, link verb, attribute, adjunct, object, adverbial modifier